Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԹԻՒ 26

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՔՍԱՆԵՒՎԵՅԵՐՈՐԴ

2 ՕԳՈՍՏՈՍ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա· ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

— 1871 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԻԶ·

2 ՑՈՒԼԻՍ 1871

ՆԱԽԱԳԱՀ· — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԱՏԵՆԱՊԵՏ· — Ս· ԱՂԱԲԻԿԵԱՆ ԼՖԼՆՏԻ (Ք· Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1° Վաւերացումն նորընտիր Երեսփոխանաց ։
2° Վերաքննութիւն Սահմանադրութեան · — Գլուխ Ա։
3° Հաւարատուութիւն Ազգ· Վարչութեան ։
4° Հրաժարական Ազգ· Վարչութեան Քաղ· Ժողովոյ ։

Ատեանը բացուեցաւ ժամ 7 ին ՝ի ներկայութեան 38 Երեսփոխանաց , որոց թիւը հետզհետէ բազմանալով 54 ի յանդեցաւ ։

Օրուան խնդրոց չ՝անցած՝ Ատենապետ Էֆ· յայտնելով թէ ժողովոյ մեծագոյն մասը 51 թուով կը կազմուի և թէ դեռ ևս այս օրինական թիւը լրացած չ՝է , դիտել տուաւ ժողովականաց որ եթէ իրաց այս վիճակին մէջ ըստ սովորականին նախընթաց նիստի ատենագրութիւնն՝ ինչպէս նաև Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ եկած երեսփոխանական նորոգ ընտրութեանց տեղեկագիրը՝ դիտողութեան ենթարկէ , բնականօրէն անոնց վաւերացումը դարձեալ մեծագոյն մասի ներկայութեան պիտի վերապահէ , որով ՝ի վերջ նորեկ ժողովականաց կողմէ նոր ՝ի նորոյ դիտողութիւններ տեղի պիտի ունենան և ժողովը երկիցս մի և նոյն խնդրոյն պիտի վերադառնայ , ընդհատելով ուրիշ նիւթի մը վրայ բացուած վիճաբանութեան ընթացքը ։ Չետևապէս Ատենապետ Էֆ · յարեց թէ ատենական այս ձևը յուսալէտս կըրկնութիւններ յառաջ կը բերէ և խնդիրներու ճապաղ վիճակ մը կուտայ · ուստի յանուն Դիւանին առաջարկեց որ ժողովը նախ Սահմանադրութեան վերաքննութիւնն սկսի , և մեծագոյն մասի ներկայութեան ձեռք առնու այն խնդիրներն՝ որոց բնութիւնն երկարաձիգ վիճաբանութեանց տեղի չըտար և գրեթէ անմիջական որոշում մը կ՝ենթադրէ ։

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ· Էֆ· — Մինչև ցարդ այսպիսի պարագաներու մէջ՝ այսինքն , երբ ժողովը նիստ կազմելու ատեն թափուր կը գտնուէր մեծագոյն մասի ներկայութենէ՝ օրուան կարգին հետևելով խնդիրները կը քննէր , կը վիճաբանէր և անոնց որոշումը մեծագոյն մասի ներկայութեան կը վերապահէր · ի՞նչ կարեւոր հարկ մը կայ արդ որ ստիպէ զմեզ ատենական այս սովորութիւնն եղծել և խնդիրներու առաջնութեան կարգը չրջել ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ֆ· Էֆ· — Կը կրկնեմ՝ Եուսուֆեան Էֆ· ի դիտողութիւնը ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս· Էֆ· — Նոյնպէս և ես ։

Այս հակառակ կարծիքներուն առջեւ՝ Ատե-

Նապետ էֆ. չ'ուզելով խնդիրն երկարել և վիճաբանութեան դուռ մը բանալ, կ'ըսկսի ըստ սովորականին ատենական ընթացքը չարունակել. հետևապէս նախ՝ հիւանդութեան պատճառաւ բացակայ գտնուելու հարկադրեալ քանի մ'երեսփոխանաց անուններ կը յիշէ և յետոյ նախընթաց ԺԵ. նիստին ատենագրութիւնը դիտողութեան կ'ենթարկէ, վաւերացումը մեծադոյն մասի ներկայութեան վերապահելով։

ԱՂԱԲԵԿԵԱՆ Մ. Էֆ. — Իմ ատենախօսութեանս մասին դիտողութիւնս այն է թէ՝ ինչ ոճով որ խօսած եմ, մի և նոյն ոճով արձանագրուած չ'է, այլ դիւանական ոճով խմբագրուած։ Խնդրեմ որ Դիւանն իմ ատենախօսութեան առանձին ոճն ու եղանակն անխոփոխ պահէ արձանագրութեան մէջ։

Նոյնպէս միւս ժողովականաց խօսքերն ալ հեղինակութեան ներքև ինկած են, հետևապէս երբ ամեն մէկ երեսփոխանի ատենախօսութեան հաւատարիմ ձևը չը պահուիր, ատենագրութիւնքը չ'է կարելի համարիլ իբրև ժողովոյ ճիշտ արձանագրութիւն։

ԱՏԵՆԱԴՊԻՐ Էֆ. — Թերևս Ատենադպիրը Մարկոս էֆ. էն աւելի փափաքող է որ, ընդհանուր ատենաբանից խօսքն իրենց յատուկ ոճովն ու եղանակաւ արձանագրուին, բայց սղագրութեան եղանակի չգոյութիւնն անկարելի կը դարձէ զայս։ Դիւանին բռնած արձանագրութիւնն՝ արդի դրութեամբ՝ միայն ատենախօսութեանց բովանդակ իմաստը կ'ամփոփէ և չը կրնար իւրաքանչիւր ժողովականի առանձինն լեզուն և ոճը պահել. ուստի Դիւանն հարկադրեալ է միշտ ատենագրութիւնն 'ի վերջէ խմբագրելու։ Ընտևապէս նա միայն բանին իմաստը անեղծ և անվթար պահելու կը նկրտի, և այս նպատակին դիմելու համար՝ կարելի եղած չափով մոյթ կը տանի ատենախօսին ճարտասանական ոճն ու բառերն իսկ պահելու. բայց խմբագրեալ ատենագրութեան մանաւանդ այս կամ այն ատենաբանին լեզուին յատուկ ոճը կրել, ոչ կարելի է իրեն համար և ոչ ալ կրնայ հաւանիլ այսպիսի բացառութեան մը, վասն զի մեր ատենագրութիւնները մի և նոյն դրչէ ելած խմբագրութիւն մ'են՝ որ բոլոր ատենաբանից գաղափարն ու խօսքը կ'ամփոփէ առանց անոնց լեզուաբանական հանգամանքները ուշ դնելու, և բնականօրէն իր ընդհանուր ոճը կ'ունենայ և այս ալ 'ի հարկէ խըմբագրին և ատենադպրին դրչին գրական դրոշմը կը կրէ։

Ո՛րչափ հաճոյական կ'ըլլար Դիւանին սղագրութեան եղանակ մ'ունենալ և ատենախօսութիւնները բառ առ բառ արձանագրել, իւրաքանչիւր ժողովականի խօսքն իր յատուկ լեզուովն ու չարադասութեամբը։ Թէև այդ լեզուն երբեմն անընթեռնելի լինէր և գործածական արդի բարբառէն զարտուղեր, սա մեծ օգուտներ յառաջ կուգային որ, թէ իւրաքանչիւր ատենաբանի խօսք իր բնական վիճակին մէջ մնալով անոր բուն արժէքն երևան կուգար, թէ Դիւանը խմբագրութեան ծանր ու դժար աշխատութենէն զերծ կը լինէր և թէ ատենագրութիւնք սակաւ մինչ պակաս խօսքի առարկայ կը դառնային. սակայն այս օգուտները վայելելու համար ամեն բանէ առաջ սղագրութեան եղանակ մը հարկ է հնարել և դիւանադպիրներն անոր մէջ վարժեցնել։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ռ. Էֆ. — Ակից առաջ անգամ մը նոյն իսկ Ատեան էֆ. այս կէտին վրայ՝ երբ խնդիր կը յուզուէր՝ լուսաւոր բացատրութիւններ հաղորդեց, որոնցմէ ժողովը խելամուտ եղաւ որ ատենագրական արդի դրութեան մէջ Դիւանն ամեն կարելի ճիգերով ատենաբանութեանց ոգին ու իմաստը կրնայ հարազատ պահել. հետևապէս ժողովը հերիք համարեց զայս։ Արդ՝ անպատեհ չ'եմ դտներ բնաւ որ ատենագրութեանց խմբագրութեան ատեն բանախօսութեան մ'ոճը յղկուի և բառ մը կոկուի 'ի հարկին։ Իսկ նա որ իւր խօսքն այլևայլ արձանագրեալ կը տեսնէ, իրաւունք ունի արդէն զայն ուղղել երբ ատենագրութիւնը ժողովոյն վաւերացման ներկայանայ։

ԱՂԱԲԵԿԵԱՆ Մ. Էֆ. — Այն ժամանակ ատենագրութիւնը մի մարդու հեղինակութիւնը կը լինի և ոչ թէ ժողովոյն անդամոց. մի մարդու խօսքն իր մտքի բացատրութիւնն է, բայց այդ ատենագրութիւնը Դիւանը մակարերելով և յիշողութեան վրայ հիմնելով խմբագրած է. այդ 'ի հարկէ ժողովոյն կը պատկանի գիտնալ, իսկ իմ ատենախօսութեանց մասին կ'ասեմ թէ այդ արձանագրութիւնն ըսածներուս ամենաճիշտ բացատրութիւնը չ'է։

Նախընթաց նիստի ատենագրութեան վրայ ուրիշ ոչ ոք դիտողութիւն կ'ընէ, հետևապէս Ատենապետ էֆ. կ'անցնի օրուան կարգին։

1°. ՎԱԻԵՐԱՑՈՒՄՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

Ընդհանուր ժողովոյ վերանորոգման Գործադիր Յանձնաժողովը մայրաքաղաքիս մէջ կատարած երեսփոխանական նորոգ ընտրութեանց վրայ տեղեկագիր մը մատուցած էր առ Արքունի Նախագահն ուղղելով։

Ատենապետ էֆ. Նոյն տեղեկագիրը ժողովոյն ներկայացուց և յատենի ընթերցաւ որոյ աւասիկ ճշգրիտ պատճէնը։

Ամենապատիւ Արքունի Հայր

Նախագահ Ազգ. Երեսփ. ժողովոյ.

Նոր Գիւղ և Սէֆէնեա մլացեալ Թաղից Ընտրողական ժողովը 20 Յունիս թուականաւ կը տեղեկագրէ թէ՝ նոյն Թաղից վիճակաւ դադարեալ երեսփոխանին տեղ նորոգ ընտրութեան ձեռնարկելով, Յունիս 13 կիւրակէ օրն ըստ օրինի քուէարկութիւնը կատարուեր և 43 քուէարկուք մասնակցելով քուէարկութեան, բացարձակ առաւելութեամբ երեսփոխան վերընտրուեր է։

Ղազարոս էֆ. Հովուեան։

Մայր եկեղեցւոյ, կէտիկ փաշայի և Գումղաբուի դրսի միացեալ Թաղից Ընտրողական ժողովը 28 Թուականաւ կը տեղեկագրէ որ, պակասեալ հինգ երեսփոխանաց տեղ նոր ընտրութեան ձեռնարկեր և ընտրական նախապատրաստութիւններն ըստ օրինի կատարելէ ետև՝ Յունիս 20 կիւրակէ օրն հրաւիրեր է զընտրողս 'ի քուէարկութիւն, և 305 ընտրողներէն 168 անձինք միայն մասնակցեր են քուէարկութեան. բայց արդիւնքը ցոյց տալով որ և ոչ մէկը բացարձակ առաւելութիւն վաստկած են, յաջորդ կիւրակէ Յունիս 27 ին կրկին քուէարկութեան հրաւիրեր է զընտրողս, առաւելագոյն թիւ վաստկող 10 անձանց վրայ։ Այս երկրորդ քուէարկութեան մասնակցեր են 295 անձինք և ընտրուեր են՝

Եսայի Էֆէնտի Ալնուխեան,
Սիմոն պէյ Մազսուտեան,
Իւրէն Էֆէնտի Կիւմիւշկրտանեան,
Պօղոս » Ձիլաճեան,
Բարսեղ » Չալաճեան,

Գործադիր Յանձնաժողովս սոյն ընտրութիւններն օրինաւոր գտնելով, պատկառելի ժողովոյդ կը փութայ ներկայացնել 'ի վաւերացումն։

2 Յուլիս 1871 Մնամք հաւտի

ԱՏԵՆԱԴՊԻՐ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ Օ. ԽՕՃԱՄԱՐԵԱՆ
(Մոմ.)

Ա՛յս տեղեկագրին ընթերցուէն ետև՝ Ատենապետ էֆ. զայն ժողովոյն դիտողութեան կ'ենթարկէ, սակայն ոչ ոք այս մասին դիտողութիւն կը յայտնէ. հետևապէս Ատենապետ էֆ. ծանուցանելով թէ դեռ մեծադոյն մաս կազմած չ'ըլլալուն՝ չ'են կրնար ընտրութիւնները վաւերանալ, առ կախ կը թողու խնդիրն և կանցնի Սահմանադրութեան վերաքննութեանը։

2°. ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ. — ԳԼՈՒԽ Ա.

ՄԱԶԼՈՒՄԵԱՆ Յ. Էֆ. — Կը հարցնեմ թէ ժողովը ուսկից պիտի սկսի Սահմանադրութիւնը վերաքննել. « Հիմնական սկզբունք » ըսուած մասի՞ն, թէ ոչ « կեդրոնական վարչութեան » գլուխէն։

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Նախընթաց նիստին մէջ տրուած որոշման համաձայն՝ ժողովը այսօր գործադրութեան մէջ դտնուած Սահմանադրութիւնն սկիզբէն գլուխ առ գլուխ պիտի վերաքննէ, և ըստ այնմ կը պարտաւորի առ այժմ առաջին գլխի վրայ քննութիւնն սկսիլ և 'ի վերջոյ կրնայ դիտողութեան առնուլ Սահմանադրութեան ճակատը դրուած « Հիմնական սկզբունքը »։

ՄԱԶԼՈՒՄԵԱՆ Յ. Էֆ. — Ըստ իս պէտք է որ ժողովը Սահմանադրութիւնը վերաքննէ « Հիմնական սկզբունքներ »էն՝ սկսելով, բայց չ'է թէ այդ սկզբունքներն՝ որոց ճշմարտութիւնը կը դաւանիմ՝ գլխովին բառնալու կամ փոխելու համար, այլ վասն զի կը կարծեմ թէ հարկ պիտի ըլլայ ուրիչ էական սկզբունքներ ալ անոնց կցորդել, որոնք թերևս անուշադիր թողուած ըլլան. զոր օրինակ՝ հիմնական սկզբանց առաջին յօդուածին մէջ, ուր Ազգին և ազգայնոց վոխադարձ պարտիքը հռչակուած են, պէտք է ամենէն առաջ անցնի յաւելեայ սա սկզբունքը « Ազգը տէր է իր ներքին գործոց »։ Ակն գրեթէ կը հետևին միւս սկզբունքները տեսակ մը չղթայակապ հաղորդակցութեամբ։

ՂԱԲԻԿԵԱՆ Մ. Էֆ. — Ինչպէս նախորդ նիստին մէջ յայտնեցի, մեր ձեռքն ունեցած Սահմանադրութիւնը մեր Ազգի այժմեան դրութեան տարերքը չը բովանդակէր իր մէջ և չը համաձայնիր և ոչ մի կերպով մեր ազգայնութիւնը կազմող տարերց հետ։ Եթէ հիմա փոփոխութիւն կ'ուզեմք մտցնել ատոր մէջ կամ թէ վերաքննութեան ենթարկել, այդ ասել չ'է թէ Սահմանադրութեան հեղինակ-

Ներու արդիւնքը կ'արհամարհենք և բանի տեղ չ'ենք դներ, քաւ լիցի. այդ դիտաւորութենէն չատ հեռի ենք ու ընդհակառակն չնորհապարտ և երախտագէտ ենք անոնց, վասնզի Սահմանադրութիւնը թէ և իւր հաստատութենէն հետէ կաղալով քայլեց, սակայն Ազգին ալ սովրեցուց թէ մի միայն Սահմանադրութեամբ կարող է կառավարուիլ. այդ է Սահմանադրութեան ամենամեծ արդիւնքը: Այսօր ալ եթէ այս տեղ ժողված ենք և մի խորհուրդ ենք կազմեր, այդ ալ Սահմանադրութեան ամենամեծ արդիւնքներէն մինն է:

Արդ իմ հայեցուածքով, Սահմանադրութեան ճակատը դրուած «հիմնական սկզբունք» ըսուածները՝ իրապէս Ազգին ոչ սկզբունքներն և ոչ նպատակն ունին իրենց մէջ. եթէ պատահաւելի ժողովդ կը ներէ ինձ, ես պատրաստ եմ մի առ մի բացատրել թէ ի՛նչպէս կ'ըմբռնեմ Սահմանադրութեան հիմնական սկզբունքները:

ՊԵԿԵԱՆ Թ. Էֆ. — (Ատենաբանին խօսքը յանկարծ ընդմիջելով) Սակայն կէտ մը կայ պարզելու, զոր Սահմանադրութեան 99 րդ. յօդուածը որոշած է արդէն: Նախ պէտք է ջնջել այդ յօդուածի տրամադրութիւնը և յետոյ «հիմնական սկզբունքները» վերաքննութեան ենթարկել:

ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԷՆ ոմանք այս ընդհատման դէմ դժգոհ մրմունջ մը բառնալով կ'ուզեն որ Աղաբէկեան Մ. Էֆ. իւր բանախօսութիւնը շարունակէ. հետևապէս Ատենապետ Էֆ. ի հրաւիրանաց վրայ ատենաբանը խօսիլ թելը ձեռք կ'առնու, այն թէ ութեամբ սակայն որ չ'ընդմիջեն զայն և ունկնդիր լինին:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. Էֆ. — Սահմանադրութեան հիմնական սկզբանց առաջին յօդուածը կ'ըսէ թէ՝ «Ազգին ամեն մէկ անհատը առ Ազգն պարտաւորութիւններ ունի, Ազգն ալ իւր կողմէ առ Ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի ևլն.»:

Ասոնք բառեր են իրարու քով կցուած. ո՞րոնք և ի՞նչ տեսակ են պարտաւորութիւնները՝ որոշուած և բացատրուած չ'են. ասոր նման են նաև յետագայ յօդուածները, որոնց վրայ հարկ չ'եմ համարիր երկայն խօսիլ և կը փութամ բացատրել Հայոց ազգայնութեան էական պայմանները:

Հայոց սերունդն այսօր Օսմանեան Տէրութեան մէջ՝ իբրև ազգ կամ ազգային ընկերական՝ երեք տարերքներէն մինն ունի և երկուսը չունի, կամ թէ ունենալէ դադրած է կամ թէ երկուսն ունի՝ մին չունի, կամ թէ ոչ ևս ունենալ կ'ուզէ, կամ թէ ոչ մինն ունի, այնպիսին Օսմանեան Տէրութեան մէջ Օսմանեան Տէրութեան օրէնքով Հայոց ազգային հասարակութեան չը պատկանիր, կամ թէ պատկանելէ կը դադրի. նա՝ թէպէտ և ցեղով հայ անձն է, բայց ազգայնութեամբ կամ թէ հասարակականութեամբ Օսմանեան Տէրութեան մէջ ունեցած նշանակութեամբը հայ անձ չէ, հապա «Հայհոռոմ, Հայթուրք, Հայքաթոլիք, Հայքուրթ, Հայպռոթէստան», հետևաբար Հայոց ազգային Սահմանադրութիւնն այնպիսի

դէն իր տարերքներովը կառավարելու մի միայն ազգային և օրինաւոր է համարած:

Ասոնք կը համարիմ եմ մեր Սահմանադրութեան նախաշաւիղ պայմաններն, ատոնցմով միայն կը ծագի մեր սահմանադրական կառավարութիւնն և ատոնք են դուռ ազգային և չ'է թէ վոխառուիլ: Իսկ եթէ որ լաւ չը հասկրցուեցան յիշած երեք տարերքներս կրկնեմ հանուսիս.

(Քանի մը ձայներ. — չատ աղէկ կրկնեցէ՛ք)

Հայոց Ազգն այսօր մի ազգ ըսուելու համար ասացի, Ա. իր ինքնօրէն եկեղեցին ունի իր ազգային կերպարանքովը. ազգային կերպարանքովը կ'ըսեմ, և խնդրեմ ուշադրութիւն ընել այդ բառին վրայ: Բ. ահաւասնութեան օրէնքը. մինչև որ ընտանիք չ'ապահովուի Ազգն ալ չ'ապահովուիր, և թէ որքան այդ ընտանեկան կեանքը Հայոց ազգայնութիւնը պահպաներ է, նորա պատմութիւնը դիտցողին յայտնի է: Գ. հրապարակական դաստիարակութիւնը, յատուկ ազգային լեզուով և դպրութեամբ: Մի ուրիշ դաստիարակութիւն ալ կայ, այն է ընտանիքական, ատոր ուղղութիւնը ծնողաց կը պատկանի, ծնողաց ձեռքն է. իսկ հրապարակականը Ազգին ամբողջութեան կը վերաբերի և անոր ուղղութիւն տալը անոր ձեռքն է:

Ահա ինչ որ ունինք. և թէպէտ ուրիշ տարերք մ'ալ ունինք որ է մեր հայկական արիւնը, բայց զայն 'ի հարկէ չ'եմ առներ, վասնզի մեղմէ ուրիշ կրօնով հասարակութիւններն ալ կ'ըսեն ու կը պնդեն թէ իրենք ալ հայոց ցեղէն են:

Ասացի թէ այդ երեք տարերքն ունեցող հայն է միայն Հայ Ազգ Օսմանեան Տէրութեան մէջ. յատկապէս կը խնդրեմ պատահաւելի ժողովէն որ այդ մասին ինձ ազգային կամ կրօնական սահմանադրութիւն չը ցուցայ, ամենևին սխեկրոնութեան հոգւով չ'է ասածս, հապա այդպէս է եղած Օսմանեան Տէրութեան մէջ, Հայոց Ազգն անոր հաստատելէն հետէ:

Օսմանեան Տէրութեան հասարակութիւնքը իրենց կրօնովն են որոշուած իրարմէ. կրօնն իր ազգային լեզուովն և ծիսովն ազգայնութիւն է կազմած. իսկ կառավարող մարմնոյն մասին ասացի թէ Հայոց Ազգն իր Օսմանեան Տէրութեան հաստատելէն հետէ իր մէջ մի առանձին ժառանգական կամ ցեղական կառավարող մարմին չ'է ունեցեր, և այդպէս ալ ճանաչեր է հայոն վրայ ոչ կարող է տարածուիլ և ոչ ալ դանի իր մէջ բանադրակել. արդ՝ այդ երեք տարերքներով կերպարանուող ամբողջ Հայոց Ազգը մի հայ անձի, մի հայ ընտանիքի և մի հայ ժողովրդեան նախնեացմէ ժառանգած սեպհականութիւնն ու իրաւունքը պարտական է պահպանել և զարգացնել օրինաւոր ուղղութեամբ. նոյնպէս և մի հայ անձն, մի հայ ընտանիք և մի հայ ժողովուրդ ամբողջ Հայոց Ազգին այդ սեպհականութիւնը պահպանելու և զարգացնելու պարտականութիւնն ունի, ազգային դաստիարակութեամբ Օսմանեան Տէրութեան մէջ: Ուստի ինչպէս ամբողջ Հայոց Ազգը պարտականութիւն ունի կատարելու մի հայ անձի, մի հայ ընտանիքի և մի հայ ժողովրդեան համար, նոյնպէս և մի հայ անձն, մի հայ ընտանիք և մի հայ ժողովուրդ պարտականութիւն ունի կատարելու ամբողջ Ազգին համար: Այդ վոխադարձ պարտականութեամբ կը կազմուի Հայոց ազգային ընկերականութեան կամ հասարակութեան կերպարանքը. այդ ընկերականութիւնը կը պահանջէ իր մէջէն ծագուելով և իրմէն օրինաւորուելով մի վարչութիւն՝ համաձայն զինքը կազմող տարերքներուն, ուստի մի այդպիսի Ազգէն ծագուած և օրինաւորուած վարչութիւնն է «Երեսփոխանական»ը ուղղութիւն առած մի «Սահմանադրութեամբ»:

Արդ՝ որովհետև Հայոց Ազգը, որ Օսմանեան Տէրութեան մէջ՝ իր մէջ մի ժառանգական կամ ցեղական իրաւունքով մի կառավարող մարմին չ'է ունեցեր և չ'ունի, հապա մի ժողովուրդ է եղեր իր առանձին կրօնովը լեզուովը և ամուսնական օրէնքովն և ինքնիրմէ առաջ բերող մի կառավարող մարմին, իր Օսմանեան Տէրութեան հաստատելէն հետէ, նմանապէս և Օսմանեան Տէրութիւնն ալ Հայոց ազգին այդ ընկերական կամ հասարակական մարմինն իր տարերքներով կառավարուելու համար, մի առանձին կառավարող մարմին նորա մէջէն առնելով չ'է նշանակած և առանձին արտօնութեամբ չ'է հաստատած, այլ իրեն է յանձնած յատուկ հրովարտակով ինքն իր մէջէն առաջ բերելու այդ կառավարող մարմինը: Ասոր համար Հայոց Ազգն ալ իր ձեռնհաս և կարող անդամներով, «ընտրողական դրութեամբ» մի «Ազգային Ընդհ. Ժողով» է կազմեր և այդ ժողովոյն ձայնի առաւելութեամբ հաստատուած կարգերը կանոններն և օրէնքներն Ազ-

...ում ամենայն ինչ ի նոր ձևի։ Նիկոլ Ա. Ղազարյանցի ...ում ...ում ...ում

լը, որ նոտր գրով տպագրուած է կայսերական կառավարութեան կողմէ հաստատուած չ'ըլլալուն 'ի նշան։ Ուրեմն անխոխոսելի սկզբունքներն որոնց 99րդ. յօդուածը կ'ակնարկէ, նոյն իսկ Սահմանադրութեան մէջ կը դտնուին եւ վերաքննութեան պահուն ակնյայտնի երեւան պիտի գան, իրենց բնութեամբը։ Եթէ՝ ինչպէս կը կարծեն՝ Սահմանադրութեան 99րդ. յօդուածին տրամադրութիւնը կը պատկանի «հիմնական սկզբանց» դլխին, եւ՝ թէ այդ մասը միայն անխոխոսելի է, ո՛վ կրնայ ընել ըսել որ Սահմանադրութեան 29րդ. յօդուածին այն տրամադրութիւնը՝ որ Ընդհանրական կաթողիկոսին 'ի կրօնականին ունեցած գերադոյն հեղինակութիւնը կը հռչակէ՝ փոխոխութեան կրնայ ենթարկիլ։

Ա.հաւասիկ հիմնական սկզբունք մը, որ Սահմանադրութեան այդ մակագիրն ունեցող գլխէն թէեւ դուրս, եւ սակայն անդեղի է. կան ասոր նման նաեւ ուրիշներ ալ։

Իրաց այս վիճակին առջեւ ա՛լ աւելն ոչ խըղճի անդորրութեամբ եւ դիտակցութեամբ կը համոզուի որ 99րդ. յօդուածը գործ չ'ունի հիմնական սկզբանց գլխին հետ, ինչպէս վայրկեան մ'այնպէս մեկնուեցաւ. հետեւապէս Ընդհ. ժողովը կը պարտաւորի Սահմանադրութեան մէջ որոնել անփոխոխելի դատուած սկզբունքներն և պատկառ կալ անոնց պահպանութեանը։ Իսկ եթէ ժողովը կ'ուզէ ըստ առաջնոյն այդպիսի անիմաստ մը դնել Սահմանադրութիւնը վերաքննէ, կարեւոր փոփոխութիւնները՝ զորս փորձառութիւնը կը թելադրէ՝ սահմանէ և այնուհետեւ այդ պատկերը ծրագրէ։

Դառնալով Մարկոս էֆ. ի, նա աղէկ բացատրեց թէ որոնք են մեր ազգայնութիւնը կազմող տարերքները, որոց համար երեք են ըսաւ.

Ա. Հայոց նախնական անկախ եկեղեցին.

Բ. Հայոց ընտանեկան ընկերականութիւնն, իր ամուսնական օրէնքովը.

Գ. Իւր հրապարակային դատիարակութիւնը, ազգային լեզուին և գրականութեամբ։

Այս երեք տարերքներն 'ի մի ձուլուած մեր ազգայնութիւնը կը կազմեն և կը պահպանեն 'ի վաղուց, և արդէն Սահմանադրութեան հիմնական սկզբանց Գ. մասին մէջ կը պարունակին, որ ասասիկ։

«Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնն և աւանդութիւնքն անարատ պահել։ — ասոր մէջ պարունակուած է նաեւ Հայոց ընտանեկան կեանքը, սուրբ ամուսնութեան օրէնքը, որ եկեղեցւոյ եօթն խորհուրդներէն մէկն է։

Դարձեալ. «Մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումն ամեն աստիճանի թէ մանչ և թէ աղջիկ տղոյոց հաւասարապէս ծաւալել.» — այս ալ դաստիարակութեան խնդիրն է։

Արդ՝ քանի որ մեր Սահմանադրութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ տարերց և յարբունեստ չնորհեալ արտօնութեանց վրայ ձեւուած է, որոյ անվթար պահպանութիւնը մեր բոլոր ուշն և յանձնառութիւնը պէտք է գրաւէ, կ'առաջարկեմ որ անոր գլուխը սա պարբերութիւնը դնէք. «Հայ Ազգը Հայաստանեայց եկեղեցւոյ աւանդական սկզբանցն և Բ. Դրան արտօնութեանցը համաձայն, իր ներքին գործոց տնօրէնութեանը համար հետեւեալ Սահմանադրութիւնը կը հաստատէ», և անմիջապէս վերաքննութեան սկսինք։

ԱՏԵՆԱԴՊԻՐ էֆ. — Սահմանադրութեան հիմնական սկզբանց վրայ յաւելի կէտեր կրնանք ունենալ, բայց չ'եմ կարծեր թէ անկից դուրս ձգուելու իմաստներ ալ դտնուին, ուրիչ խընդիր է թէ կրնայ աւելի պարզ և անիմաի կերպով խմբագրուիլ հիմնական սկզբանց մասը, ասի պարզապէս խմբագրական գործ է և 'ի վերջէ տնօրինելի։ Ուստի փոխանակ յաւելի կէտերն այժմէն նախապատրելու և 99 րդ. յօդուածին մեկնութեամբ զբաղելու, աւելի խնաստուն գործ է ըստ իս՝ վերաքննութիւնն Ա. գլխէն սկսիլ և չարունակել. երբ վերջին 99 րդ. յօդուածն ալ վերաքննեմք, այնուհետեւ կրնանք դառնալ հիմնական սկզբանց մասը ձեռք առնելու, և տ'ել 99 րդ յօդուածով զբաղելէ ազատ՝ զանոնք մեր վերաքննած Սահմանադրութենէն քաղելով ամբողջել և կարգաւորել, բնական ընթացքը։

Համաձօտիւ այսչափ է ասասիկ իմ կարծիքս ներկայ խնդրոյն վրայ։

ՈՍԿԱՆ Յ. էֆ. — Այս և ասկէ վերջը ծագելիք դժուարութեանց առաջքն առնելու նպատակաւ էր որ քանի մը անգամ առաջարկեցի Սահմանադրութիւնը վերաքննելու չը ձեռնարկած՝ ընդհանուր տեսութիւն մ'ունենալ աչքի առջև։

Ժողովը առաջարկութիւնս չ'ընդունեց, կը յարգեմ իր կարքը։

Ազաբէկեան Մ. էֆ. ի առենադրաութիւնն՝ որ Հայաստանեայց եկեղեցւոյ և Ազգին կեանքի տարերց վրայ գեղեցիկ նկարագիր մ'էր, նպատակ ունէր, չ'է թէ Սահմանադրութեան հիմնական սկզբունքներն եղծել և բառնալ, այլ զանոնք բացատրել իրենց բուն տեղին մէջ։ Սահմանադրութիւնը կը վճռէ թէ հիմնական սկզբունքներն անխոխոսելի են, չ'ըսէր սակայն թէ նաեւ անբացատրելի մնան։

Ղազարոսեան Բ. էֆ. — Նախ Սահմանադրութեան հիմնական սկզբունքներն օրինադրութեան սկիզբը դրուած վեց յօդուածոց մէջ ամփոխուած չ'են որ, միայն անոնք անդեղի ըլլան և միւսներն փոխոխութեան ենթակայ, ինչպէս Փափազեան էֆ. պարզեց։ Անխոխոսելին այն է որ ազգային իրաւանց և պարտուց կը վերաբերի. այդ վեց յօդուածները կրնանք փոխել։

Ըսող եղաւ թէ Ընդհ. ժողովը չը կրնար փոխոխել ինչ որ օրէնքն անխոխոսելի վճռած է. այս կարծեաց առջեւ կը հարցնեմ թէ ո՞ւր է Ազգին օրէնադիր ժողովը։

Խօճասարեան Օ. էֆ. — Տասը նիստի չափ խորհեցանք թէ Սահմանադրութիւնն ինչպէս վերաքննենք, հիմա ալ կը մտածենք թէ վերաքննութիւնն ո՞ւսկից սկսինք։ 1863 ի Օրէնդիր Ցանձնաժողովը Սահմանադրութիւն մը խմբագրեր և առանց զայն ազգային Ընդհ. ժողովոյ քննութեան ներկայացնելու Բ. Դրան հաղորդեր է ուղղակի. արտաքոյ կարգի պարագայներու մէջ 'ի գործ դրուած այս իրողութիւնը ներելի է, սակայն նոյն ցանձնաժողովը ուրիչ ամենամեծ սխալ մը գործեր է, ինքն օրէնադիր եղեր և ապագայ օրէնադիրներու չարժումն իր կամաց ներքեւ պրկեր է, արգելը դնելով որ Սահմանադրութեան այս ինչ կամ ինչ մասը անփոխոխելի մնայ։

Երբ այսպէս իշխանութիւն մը «ոչ կարեւոր» նշանաբան կ'ընտրէ իր ընթացքին, ժողովուրդն ալ «կը փղձնեմք» կ'ըսէ, և ասկէ կը հետեւի քանդ ու աւեր։ Ուստի «հիմնական սկզբունքներն» անփոխոխելի ալ ըլլան կամ ոչ, անկ սկսինք վերաքննութիւնն, որպէս զի 63ի օրէնադիրներուն մեր վրայ դրած այդ հարկը չնչեմք, սխալը ուղղեմք և գործնապէս հաստատեմք այն սկզբունքը թէ՝ օրէնդիր ժողով մը չը կրնար ապառնի օրէնադրութեանց վրայ տարածել իր հեղինակութիւնը։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ա.ՏԵՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՑ ԻԵ. ՆԻՍՏԻ

Ա.յս պահուս Ա.տենապետ էֆ. Ներկայութեան տուարերը քննելով կը յայտնէ թէ ժողովոյ օրինական թիւը դոյացած է արդէն, և հարկ կը համարի՝ վերաքննութիւնը սակաւ ինչ ընդ հատելով՝ ժողովոյն որոշման երթ արկել աւելի կամ նուազ նեղքին խնդիրները։

Ժողովը կը հաւանի ասոր, հետեւապէս Ա.տենապետ էֆ. Նախընթաց ԻԵ. Նիստին Ա.տենադրութեան վրայ անդամ մ'ալ կը հրաւիրէ ժողովը իւր դիտողութիւնն ընել։

ԵՈՒՍՈՒՓԵԱՆ Տ. էֆ. — Ա.տենադրութեան 366րդ. երեսին Բ. սիւնակին մէջ իմ մէկ խօսքը կայ գրուած, որ այսպէս կ'սկսի. «կարծեմ թէ ինչ առաջ խօսող մեծարոյ պատուոնակիցներս պահանջելու իրաւունք ունին որ գաղ. ժողովոյ համարատուութեան տեղեկագրին հետ նաեւ կրօնականն ալ իւր պատասնատարութեան համարը տայ» այս տողերուն սկիզբը պէտք է դնել, «որովհետեւ Ազգային վարչութիւն ըսելով կրոն. և գաղ. ժողովները միանգամայն կը հասկնամք,» խօսքը։

Գիչ մը վարը գրուած է, «բառի մը փոխուելուն պահանջել աւելորդ կը դտնեմ և աննպատակ» այս «աննպատակ» բառը ինծ չ'է և ջնջելի է։

Մ.ԱԶԼՐՄԵԱՆ Յ. էֆ. — Ա.տենադրութեան վերջի երեսին մէջ գրուած է թէ՝ ես վկայած եմ Նազարեան Թորոս էֆ. ի հիւանդ ըլլալուն, Ա.տենապետիր էֆ. ի կողմէ անոր երթորդ բացակայութիւնը ծանուցուած աւտն։ Ես այդպիսի վկայութիւն մը չը տուի և կ'ուզեմ որ այս կէտը ուղղուի։

Ա.յս դիտողութիւններէն ետեւ՝ Ա.տենապետ էֆ. Նախընթաց Նիստի ատենադրութիւնն ընդունուած կը հրատարակէ։

ՎԱՒԵՐԱՑՈՒՄՆ ՆՈՐՈՂՆԻՐ ԵՐԵՍԻՓԱՆԵԱՑ

Ա.տենապետ էֆ. քուէի կ'ենթարկէ գործադիր Ցանձնաժողովոյ նոր ընտրութեանց տեղեկագիրը։ Ժողովն առանց դիտողութեան ընդունելով հանուր հաւանութեամբ կը վաւերացնէ անոր կողմէ ծանուցեալ Երեսփոխանական վեց նորոգ ընտրութիւններն և կ'անցնի Սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՓՆՈՒԹԵԱՆ

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. Էֆ. — Որովհետեւ հիմնական սկզբանց վրայ Ներելի եղաւ վիճաբանիլ և ես որ արդէն իմ գլխաւոր պայմաններս բացատրեցի, կ'ուզեմ սակաւ մ'ինչ խօսիլ նաև անոնց փոփոխելի կամ անփոփոխ լինելուն վրայ: Չը կայ մի բան արեգական տակ՝ որ փոփոխութեան չ'ենթարկի: Ի՞նչ են ուրեմն այդ սկզբունքները, զորս չ'ենք համարձակիր վերաքննել և փոփոխել:

Այդ սկզբունքներն և զայս Սահմանադրութեան հեղինակներն անգոսնելու մտօք չեմ լսեր, ութ տարուան մէջ բիւր անդամ ընթերցայ և տեսայ որ ոչ տեսական են և ոչ գործնական, և ոչինչ յարաբերութիւն ունին մեր ազգային դրութեան հետ, զոր պարտական ենք ճանաչել:

Ասոնի վերաբերեալ կը կրկնեմ և վերահին կ'առաջարկեմ իմ պայմանները, բայց եթէ պատկառելի ժողովդ կ'ուզէ չտալով քննութիւնը կատարել, իւր գիտնալիք բանն է այդ:

Ակնկից առաջ նախընթաց նիստի մէջ ասացի որ ժողովին վերաքննութեան ձեռնարկելէ առաջ մի կերպարանք տայ իրեն, որով Սահմանադիր ժողով լինի. ի նկատի չ'առնուեցաւ այս կէտը, և ահա հարկը ստիպեց վեր որ անոր վրայ միանգամ եւս ժողովդ ուշադրութիւնն հրաւիրեմ և իւր առաջարկութիւնն կրկնեմ զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Դիւանը կ'առաջարկէ որ եղած առաջարկութիւններն գրաւոր հաղորդուին իրեն:

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. Էֆ. — Շնորհակալ եմ որ խօսք ընդունեցի իմ գիտողութիւնս աւելի ուշադրի բացատրելու համար, որ տարբեր մեկնութիւն ընդունեց: Ոմանք կարծեցին թէ ես Պէկեան Էֆ. ի հետ համաձայնած բացարձակապէս կ'ըսեմ թէ՝ Սահմանադրութեան 99 րդ. յօդուածի համաձայն հիմնական սկզբունքներն անփոփոխելի են. բայց ես դիտել տուի որ եթէ 99 րդ. յօդուածը հիմնական սկզբանց գլխին հետ կապուած չէ կամ ընդհ. ժողովն որ և է որդիական ազդեցութեան տակ չըգտնուիր, կըրնայ ինչպէս որ ուզէ օրէնք սահմանել. ըսի նաեւ թէ ընդհ. ժողովն օրէնսդիր ժողով չէ, ասոր վրայ ժողովականի մը կողմէ հարցում եղաւ ինձ՝ որ օրէնսդիր մարմինը ցոյց տամ. թէեւ մեկնութեան չ'էր կարօտ խօսքս, թէեւ Աղաբէկեան Մ. էֆ. ալ այն կէտն ակնարկեց, ընդհ. ժողովն իրեն պէտք է կերպարանք մը տայ ըսելով, սակայն ինձ եղած հարցումը չ'եմ ուզեր անպատասխանի թողուլ:

Օրէնսդիր կ'ըսուի այն ժողովն՝ որ ուղղակի Ազգէն կ'առնու իւր ծագումն օրէնք սահմանելու պաշտօնով: Անոր հեղինակութիւնը ճնշման ներքեւ չ'ընկնիր, և պարտաւոր չ'է այս կամ այն օրինաց հաւանկերպիլ: Օգտէն Էֆ. ըսաւ թէ երբ օրէնսդիր ժողով մ'ազգային դատները կը գոցէ, յեղափոխութիւնը գլուխ կը տնկէ, և ամեն պատահար կը քանդէ: Չիմա խնդիրն հոս է թէ՝ ընդհ. ժողովն օրէնսդիր ժողովոյ կերպարանք առած է, թէ Ազգին մէջ տեղի ունեցած պատահարներն այդ կերպարանքը տուած են:

Փափազեան Էֆ. ի բացատրութեանց վրայ, 99 րդ. յօդուածին տրամադրութիւնը՝ Սահմանադրութեան տեսրին սկիզբը դրուած «հիմնական սկզբանց» չը վերաբերիր, ուստի և իմ կարծիքս է որ հիմնական սկզբունքներն այժմ վերաքննելէ ետեւ, Սահմանադրութեան խմբագրութենէն վերջը՝ բոլոր սկզբունքները քաղենք և տեսրին սկիզբը դնենք:

ՊԷԿԵԱՆ Թ. Էֆ. — Որովհետեւ խնդիր ծագեցաւ Եկեսիոնական Ընդհ. ժողովոյ իշխանութեան կամ ձեռնհասութեան սահմանին վրայ, ուստի աւելորդ չ'է որ ես ալ իմ ըմբռնուած յայտնեմ:

Եւրոպական ազգաց մէջ՝ ինչպէս յայտնի է՝ զազգը ներկայացնող երեսփոխանական ժողով կայ, Ներակրյտ կայ և Օրէնսդիր ժողով կայ, ասոնց երեքն ալ իրենց յատուկ պաշտօնն ունին և կը վարեն զայն, իրենց ձեռնհասութեան սահմանին մէջ: Բայց մեր Ազգին մէջ. զԱզգը ներկայացընող ժողովն ալ, Օրէնսդիրն ալ, Գործակատարն ալ Երեսփոխանական ժողովն է, սա տարբերութեամբ՝ զոր արժան է ուշադրութեան առնուլ՝ որ իւր օրէնսդրական իշխանութիւնը պարփակուած է, ի. Դանէն Ազգին տրուած արտօնութեանց սահմանին մէջ և ներեալ չ'է իրեն այդ չրջանէն դուրս ելնել: Իսկ եթէ նոր պիտոյք մը նոր հարկ մը պահանջէ նոր օրէնք մը սահմանել, որ Ազգային արտօնութեանց չրջանէն դուրս լինի, այն ատեն կը պարտաւորի Ի. Դրան հետ անոնց վրայօք բանակցիլ և անոր հաւանութիւնն և արտօնութիւնն առնուլ:

Իսկ գալով Սահմանադրութեան հիմնական

սկզբանց փոփոխութեան կամ անփոփոխութեան խնդրոյն, Եւսուբեան Էֆ. ի հետ ձայնակից կ'ըսեմ թէ՝ այդ մասին փափազեան Էֆ. բացատրութիւն տուաւ, որով ժողովը ծանօթացաւ թէ Սահմանադրութեան հիմնական սկզբունք ըսուած մասը՝ Ի. Դանէն եկած Սահմանադրութեան մէջ գրուած չ'է, այլ՝ ի վերջէ կցուած է անոր, հետեւաբար 99 րդ. յօդուածը չը վերաբերիր այդ գլխին և վերաքննութեան առեն նոյն իսկ Սահմանադրութեան մէջ յերեւան պիտի գան այդ հիմնական սկզբունքները: Բայց ես սա դիտել կուտամ թէ՝ այդ հիմնական սկզբունքներն օրինաց տրամադրութեան համեմատ թէև փոփոխելի համարուին, սակայն ճշմարտութիւններ են պարտեաց և իրաւանց վրայ հիմնեալ, և ահա ասոր համար Օրէնսդիր ցանձնաժողովն առանց Ի. Դրան ներկայացնելու աներեւոյթ դերը է կանոնք Սահմանադրութեան սկիզբը, հետեւաբար դարձեալ անփոփոխելի են:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. Էֆ. — Եւսուբեան Էֆ. լաւ խօսեցաւ, բայց ոչ իրաւացի. վասն զի կ'ուզէ նախ չէնքը բարձրացնել և յետոյ հիմը դնել:

Ընդհ. ժողովը սահմանադիր ժողով մ'է այսօր, վասն զի յեղափոխութենէ մը ծնաւ Պօղոս Պասրիարքի անկումէն ետեւ, և երբ Թրքիոյ Սրբազան պատրիարքական աթոռը բարձրացաւ, ամեն տեղ կ'ըսուէր թէ Սահմանադրութիւնը՝ վերաքննելու համար Ընդհ. ժողովը վերակազմել պէտք է: Ուրեմն Ընդհ. ժողովը կրնայ Սահմանադրութիւնն անկախօրէն վերաքննել, և պէտք է ամենէն առաջ հիմը ձգէ ու եսքը չէնքն սկսի:

Եթէ անգամ մը հիմնական սկզբունքներն ի՛քննին առնու, անոնց մէջ ի՛նչ տարտամութիւն և ի՛նչ չփոթ պիտի նշմարէ, օրինակի համար՝ առաջին յօդուածն ընթերցողը պարտիք ու իրաւունք բառերուն պիտի հանդիպի առջի, սակայն չը պիտի կրնայ ըմբռնել թէ այս պարտիքն ու իրաւունքն որոց կը վերաբերին:

Իմ կարծիքս և առաջարկութիւնս այն է որ ամենէն առաջ հիմնական սկզբունքները վերաքննուին և սահմանուին, մանաւանդ անոր համար որ վերաքննութեան ատեն փորձաքար պիտի ըլլան մեզ, որով Սահմանադրութեան յօդուածոց արժէքը դատելով՝ ըստ այնմ պէտք եղած փոփոխութիւններն պիտի ընենք:

ԱՄՐՕ Ս. Էֆ — Ըստ իս խնդիրը խիստ պարզ է և բացատրութեանց ձեւն է միայն որ չփոթ կը պատճառէ: Մեր օրինագիրքն արդարև ունի անյեղլի սկզբունքներ վերծ վերաքննութենէ, սակայն ատոնք այդ «հիմնական սկզբունք» մակագրեալ գլխին մէջ չ'են, այլ նոյն իսկ Սահմանադրութեան մէջն ամփոփուած են եւ օրէնսդրական չէնքին անկիւնաքարերը կը ձեւացընեն: Այո՛, անփոփոխելի է և վերծ որ և է հեղինակութենէ, Մայր Աթոռոյ գերագոյն հեղինակութիւնը՝ կրօնական իրաց մէջ, ներ Օսմանեան հպատակութիւնը, ժողովրդեան ընտրական իրաւունքն, և ասոնց կ'ակնարկէ Սահմանադրութեան 99 րդ. յօդուածը, որուն տակերէնը բուն իմաստը աւելի մեկին կը բացատրէ «Ինչպես նիզամնամէներին էտասընա տօգանըլմազըզըն» բառերով: Այդ յօդուածն հիմնական սկզբանց գլխին հետ բնականօրէն չը կընար գործ ունենալ, քանի որ նոյն գլուխը Ի. Դռնէն վաւերացեալ օրինագրքին մասը չ'է, և ի վերջոյ կցուած: Կը դիտեմ որ այդ գլխին մէջ գրուած յօդուածներն օտար օրինագրքերէ քաղուած անհամապատասխանալի թարգմանութիւններ են, որ իրենց տարտամութեամբն և՛ լոկ տեսական հանդամանքներովին որ և է արդիւնք մը յառաջ չ'են բերեր և չ'են իրագործեր:

Ես կ'առաջարկեմ որ ժողովը տեսական ճարտասանութենէն ձգելով գործնականին մտնէ, և Սահմանադրութիւնն առաջին գլխէն սկսեալ վերաքննելու ձեռնարկէ, և եսքն ալ իր ներածութիւն իւր ազգայնութեան տարերց և Սահմանադրութեան ոգւոյն մէկ քաղուածոյ պատկերը պատրաստէ և Սահմանադրութեան սկիզբը զետեղէ:

Այս միջոցը ոչ միայն չուտով և արդիւնաւոր կերպով կը հասցնէ զմեզ դէմ եդեալ նպատակին, այլ եւ գոհունակութիւն կը պատճառէ ժողովրդեան, որ ակնդէտ կ'սպասէ մեր Սահմանադրութեան վերաքննութեան սկսիլն անգամ մը տեսնելու:

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Մինչեւ ցարդ եղած վիճաբանութիւններէն Դիւանը կ'ըմբռնէ որ ժողովը մեծագոյն մասամբ Սահմանադրութեան հիմնական սկզբանց գլուխն անհատականալի և անորոշ կը գտնէ և վերաքննութեան կարօտ կը համարի, Սահմանադրութեան 99 րդ. յօդուածին տրամադրութեան անհագորդ համարելով զայն. հետեւապէս հարկ կ'ըլլայ առանց վիճաբանութիւնն երկարելու Սահմանադրութեան առաջին գլխէն վերաքննելու սկսիլ:

Եւ որովհետեւ Աղաբէկեան Մ. և Խօճասար-

եան Օ. էֆ. ները՝ ինչպէս կ'երեւի առաջնոյն առենապետութենէն և երկրորդին հրապարակային յօդուածներէն՝ խիստ սիրած են այն տարերքներն ու սկզբունքներն որոնք մեր Սահմանադրութիւնը կը կազմեն, Դիւանը կ'առաջարկէ անոնց՝ որ համախորհուրդ այս կէտին վրայ ծրագիր մը պատրաստեն և յառաջիկայ նիստին ներկայացնեն ժողովոյն։

(Քանի մը ձայներ. — Խիստ լաւ, խիստ լաւ)։

Իսկ եթէ դեռ եւս ուզողներ կան որ ժողովոյ պաշտօնին սահմանը բացատրուի և օրէնդիր ըլլալը կամ չ'ըլլալն որոշուի, այն առեն՝ թէեւ բոլորովին անտեղի կը համարիմ՝ խնդրոյ կարգը կ'անցնեմ այս ալ, իբր առաջին խնդիր։

Առեանն այս միջոցիս ընդհատելով՝ ժողովը պահ մը դադար կ'առնու և յետոյ կը շարունակուի կրկին։

Առենապետ էֆ. Ծանուցանելով թէ հիմնական սկզբանց վերաքննութիւնն ետքն թողուած է, կը հրաւիրէ ժողովը Սահմանադրութեան Ա. Գլուխը վերաքննելու սկսիլ, և անոր առաջին յօդուածն 'ի լուր ժողովոյն կ'ընթեռնու։

«ԳԼՈՒԽ Ա.

«Ա.ԶԳԱՅԻՆ ԿԵՆԴՐՈՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

«Ա. ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՑ

«ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԱԺԱՐՈՒՄ

«Յօդ. Ա. — Կոստանդնուպօլսոյ Պատրիարքը «բոլոր Ազգային ժողովոց Նախագահն է և «անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ, «և մասնաւոր պարագաներու մէջ՝ Տէրութեան «հրամանաց գործադրութեան միջնորդն է։

«Ուստի պէտք է որ Պատրիարք ընտրուելու «անձն՝ ընդհանուր Ազգին վստահութեան ու «յարգանացն արժանի ըլլալու համար՝ Պատ«րիարքական Աթոռին վայելուչ ամեն յատկու«թիւններն ու արժանաւորութիւնն ունենայ, «և 'ի վաղուց անտի Պատրիարքութեան յատ«կացեալ Եպիսկոպոսաց դասէն ըլլայ, միան«գամայն Տէրութեան կատարեալ վստահու«թեանն արժանաւոր, և գոնէ իր հօրմէն «սկսեալ՝ Օսմանեան հպատակ, և երեսուն ու «հինգ տարին լրացուցած ըլլայ։»

Այս յօդուածին ընթերցումէն ետեւ՝ Առենապետ էֆ. կը հրաւիրէ ժողովն որ անոր տրամադրութեանց վրայ իւր դիտողութիւններն յառաջ բերէ։

Ա.ՊՐՕ Ս. ԷՖ. — Երկու դիտողութիւն ունիմ այդ յօդուածին նկատմամբ. Նախ՝ աւելորդ կը գտնեմ պահանջել որ Պատրիարք ըլլալու անձն իւր հօրմէն սկսեալ Օսմանեան հպատակ լինի. Ես առանց անոր հօրը Օսմանեան հպատակ ըլլալուն կարեւորութիւն տալու, միայն կը պահանջեմ որ՝ ինքն Օսմանեան հպատակ ըլլայ, և այսքանը հերիք կը համարիմ։

Երկրորդ՝ միթէ անողոքելի օրէնք մ'է որ անպատճառ պատրիարքական ընտրելին 35 տարիքը լրացուցած ըլլայ, և ինչ բարոյական պատճառ ունի ընտրելութեան այս պայմանը։ Ինչ ընելու է եթէ 35 տարեկան եպիսկոպոս մը չը գտնուի պատրիարքական պաշտօնը վարելու արժանի, և անդին ատկէ նուազ տարիք ունեցող եպիսկոպոս մը լինի լիապէս արժանաւոր։

Ա.յսպիսի մեքենական անխիստ պայման մը կը հարկադրէ զմարդ՝ բռնազբօսիկ՝ անարժան անձի մը տալ քուէն և իւր խղճմտանաց դէմ մեղանչել։

Ղ.Ա.ԶԱՐՈՍԵԱՆ Ֆ. ԷՖ. — Ես ալ Ա.պրօ էֆ.ի հետ համամիտ եմ որ, չը պահանջուի Պատրիարք ըլլալու անձին 'ի հօրէ Օսմանեան հպատակ և անպատճառ 35 տարեկան լինելը։ Իւր հպատակ լինելը պէտք է հերիք համարել և միանգամայն տարիքի պահանջումը մեղմել։

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Ի պատասխան Ա.պրօ էֆ.ի առաջին դիտողութեան կ'ըսեմ թէ՝ Պատրիարքի հպատակութեան իւր հօրմէն սկսիլը՝ կարծուածին չափ աննշան բան մը չ'է Ռ. Դրան համար, որովհետեւ կը մտածէ նա թէ՝ այնպիսի պարագայ մը օրին մէկը կը պատահի որ Պատրիարքն իւր հօրը օտար տէրութեան հպատակ ըլլալէն օգուտ քաղել փորձէ և ինքզինքն տէրութեան հպատակ ձեւանայ։

Իսկ տարիքի խնդրոյ մասին, Ա.պրօ էֆ.ի դիտողութիւնը կ'ընդունիմ և հարկ կը տեսնեմ այդ պայմանը չափաւորել։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ա.պրօ էֆ.ի ըրած երկու դիտողութիւններն ալ իրաւացի են. ասոնց վրայ քանի մը բան ալ իմ կողմէ կը յարեմ։

Ա. Ըստ իս՝ ինչպէս Տաճկաստանի Եպիսկոպոս մը էջմիածնի կաթողիկոս կ'ընտրուի, առանց անոր նախկին հպատակութիւնն 'ի նկատի առնելու, մի և նոյն սկզբամբ՝ նաև օտար երկրի մը մէջ բնակող եպիսկոպոս մը կրնայ Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրուիլ։

Բ. Կը տեսնեմք որ սահմանադրական ընտրելութեան հասակ մ'որոշուած է բոլոր պաշտօններու համար, ինչո՞ւ երբ կարգը Պատրիարքին ընտրութեան գայ՝ տարբեր տարիք ուզենք նշանակել։

Գ. Միթէ Պատրիարք ըլլող անձը միշտ եպիսկոպո՞ս ըլլալ պէտք է, ներելի չ'է՞ արդեօք որ վարդապետ մը Պատրիարք ընտրուի և յետոյ եպիսկոպոսական Ս. աստիճանը բարձրանայ, ինչպէս եղաւ Երուսաղէմայ Պատրիարքի ընտրութեան ատեն։ Ա.յս թէութիւններով պատրիարքական ընտրելեաց ցանկը կ'ընդարձակի և ընտրութիւնն որ և է սեղմուիմ ըլլալէ՝ աղաւորչն զարժանաւորը կ'երթայ կ'ընդդրկէ։

Դ. Առաջին յօդուածը կ'ըսէ,

«Պատրիարքը բոլոր ազգային ժողովոց նախագահն է»։

Պէտք է հոս '« ազգային ժողովոց » բառերը վերցընել և ըսել, «Պատրիարքը կեդրոնական վարչութեան կամ կեդրոնական ժողովոց նախագահն է։ Ա.ռանց այս բացատրութեան խնդիրը տարտամ կը մնայ։

Ե. Նոյն յօդուածը անմիջապէս ետքը կ'ըսէ.

«Եւ անոնց (ժողովոց) գործադիր իշխանութիւնը կը վարէ»։

Յատենի փաստ. ժողովոյ տրուած որոշում մը երբ թաղերիս Ռ. Դրան կը հաղորդուի, թաղերիս մէջ Պատրիարքին կնքոյն քով նոյն իսկ ժողովոյն կնիքն ալ կ'երեւի և Պատրիարք ու ժողով միատեղ Ռ. Դրան կը ներկայանան. կը հետեւի ուրեմն որ ժողովոց գործադիր իշխանութիւնը կեդրոնացած չ'է Պատրիարքին վրայ։ Ա.յսպիսի պարագայի մը մէջ աւելի բնական է ըսել թէ՝ «Պատրիարքը կեդրոնական վարչութեան պաշտօնական ներկայացուցիչն է»։

Զ. Նոյն յօդուածն՝ ակնարկած տողերէս ետք՝ Պատրիարքին համար կը յաւելու.

«Մասնաւոր պարագաներու մէջ Տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է»։

Մինչդեռ Պատրիարքը միջնորդ է Ազգին և Տէրութեան մէջ, հոս «մասնաւոր պարագաներ» բառերը Պատրիարքին միջնորդութիւնը կը սահմանափակեն. ուստի Պատրիարքին Տէրութեան և Ազգին մէջ միջնորդ ըլլալն նշանակելու ատեն պէտք է ըսել որոշակի թէ՝ «կեդրոնական վարչութեան ժողովոց գործակցութեամբը միջնորդ է»։ Վասն զի եթէ Տէրութիւնը Պատրիարքին կարծիքն ուզէ, Պատրիարքն իր նախագահութեամբը գործող ժողովներուն որոշմունքը սլիտի չարժի. իսկ եթէ Ազգին կարծիքն ուզէ, այն ժամանակ Ընդհ. ժողովոյն որոշումը համեմատ պիտի չարժի, ինչպէս որ Սահմանադրութեան խմբագիր երկուց ցանձնաժողովոյ առ Ռ. Դուռն մատուցած տեղեկագիրը՝ որ Սահմանադրութեան սկիզբը դրուած է՝ կը ցուցընէ։

Է. Վ.ԽՀ. Կաթողիկոսին կողմէ Զալալեան Սրբազանին Պօլիս գալէն ետքը՝ նոյն իսկ կառավարութեան համար որոշուած խնդիր մ'է թէ՝ Պօլսոյ Պատրիարքը Թուրքիոյ մէջ Ս. Էջմիածնի Վ.ԽՀ. Կաթողիկոսին փոխանորդն է։ Ա.յս կէտը պէտք է յաւելցնել Պատրիարքի պաշտօնին վերաբերեալ գլխին մէջ։

Ը. Նոյն յօդուածը կը հրամայէ որ Պատրիարքն Ազգին վստահութեան և յարգանաց արժանի ըլլայ։ Ա.յս կարգի եկեղեցականները գտնելու համար միայն մէկ հատիկ միջոց մը կայ՝ որ է կեդրոնական Դիւանատան արձանագրութեանց դիմել։ Կրնան գտնուիլ եկեղեցականներ որ թէեւ ազգային ատեանի մը դատապարտութեան վճիռ ընդունած չ'են, սակայն իրենց անցեալն արատաւոր է։ Դիւանատունն իր պատմական արձանագրութեամբ ամեն ինչ կը մատնէ և թոյլ չը տար որ համբաւը նենգէ զմեզ, համբաւը՝ որ ստէպ կուրբէն անարժան մարդ մը հասարակաց համակրութեան մէջ կը բարձրացնէ։ Ա.յս տեսութեամբ վիճանակ անորոշ կերպով՝ «Պատրիարք ընտրուելու անձն Ազգին վստահութեան արժանի ըլլայ» ըսելու, պէտք է անպատճառ «ըստ վկայութեան կեդր. Դիւանատան» խօսքը կցել անոր քով, և ընտրութեանց ատեն Դիւանատան արձանագրութենէ լոյս քաղել։ Առանց այս միջոցը գործադրելու՝ կը պատահի որ ընտրութիւնները ձախող և վնասակար արդիւնք յառաջ բերեն։ Ա.յս կէտը մանաւանդ պէս ժողովոյն ուշադրութեան կը յանձնեմ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կը դիտեմ որ նախ՝ քննութեան ենթարկուած այդ առաջին յօդուածը ճապաղ է, բովանդակութիւնը խորհրդին չը համաձայնիր։ Գլխին վրայ «Պատրիարք կոստանդնուպօլսոյ, ընտրութիւն և հրաժարում» բառերը կ'երեւին, իսկ մէջը Պատրիարքի պաշտօնը բացատրուած է։

Բ. ժողովները չը հաստատած՝ Պատրիարքն անոնց նախագահն է կ'ըսէ, և մենք հիմայ այս կէտը քննելով և որոշելով որոշած պիտի ըլ-

դարձեալ ոչ ոք ի նոցանէ ելանէր ի տեղեաց իւրեանց, մինչեւ ի մեռանել հարցն։ Եւ ապա ելեալ ի տեղեաց իւրեանց՝ ոչ ոք դառնայր ի տեղիս

իւր առջևն ալ վստահութեան արժանի ըլլայ : Տարբեր պարագայի մէջ , որ բնաւ պատահած չ'է և աչխատինք որ երբէք տեղի չ'ունենայ , Տէրութիւնն իւր իրաւունքն 'ի գործ կը դնէ : Արդ եթէ եղած առաջարկութեանց համաձայն 'ի Ռուսիա , 'ի Հնդկաստան , 'ի Պարսկաստան 'ի Ռուսիա , 'ի Հնդկաստան , 'ի Պարսկաստան կամ այլուր բնակող Եպիսկոպոսի մը արժանաւորութիւնը գիտնալով ժողովը զանի մեծագոյն մասամբ Պատրիարքը ընտրէ , այդ մարդն՝ ըստ որում հեռաւոր և անծանօթ՝ ինչպէս Տէրութեան վստահութիւնը գրաւած ըլլայ . հետեւապէս Տէրութիւնն ստէպ անվստահելի է ըսելով Ազգին ընտրութիւնն անվաւեր սլիտի

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի Ի Վիեննատուն Պատրիարքարանին, և կը
գտնուի Էջմիածնայ բանկալինները։